ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 21-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց մարշալ Բաղրամյանի 100-ամյա հոբելյանի հանդիսության առիթով Հայաստան ժամանած պատվիրակությունը՝ բարձրաստիճան զինվորականներ և վետերաններ Ռուսաստանից, Բելառուսից, նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից՝ գեներալ-մայոր Մարտիրոսյանի ուղեկցությամբ: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ողջունեց եղբայրական երկրների մասնակցությունը հոբելյանական հանդիսություններին՝ այն դիտելով ԱՊՀ երկրների զինված զինվորական ուժերի միջև գոյություն ունեցող եղբայրական հարաբերությունների արտահայտություն:

Վեհափառ Հայրապետը նշելով հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, այն համոզմունքը հայտնեց, որ այն կշարունակվի նաև ապագայում:

Հյուրերին ներայացնելով Հայոց բանակի հոգևոր խորհրդական հայր Վրթանեսին, Վեհափառ Հայրապետն ընդգծեց նաև զինվորականների ու հոգևորականների միջև գործակցության անհրաժեշտությունը, որոնք մի դեպքում ունեն Աստծու տված կյանքը պաշտպանելու և մյուս դեպքում այն հոգևորապես արժեցնելու առաքելություններ:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց բոլոր հյուրերին:

ՎԵՆԵՏՈ ՄԱՐԶԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

Դեկտեմբերի 12-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ընդունեց Իտալիայի Վենետո մարզի ձեռնարկատերերի պատվիրակությանը՝ մարզի կառավարության փոխնախագահ Բրունո Կանելլայի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Պադովայի տոնավաճառի գլխավոր քարտուղար Մանֆրեդ Նոյմանը, Պադովայի փոքր և միջին ձեռնարկությունների կոնֆեդերացիայի փոխքարտուղար Ֆրանկո Կոնցատոն, CNA VENETO-ի ներկայացուցիչ Ստեֆանո Ֆաբրիսը, Հայաստանում Իտալիայի հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն:

Նորին Սրբությունը պատվիրակությանը պատմեց Հայ Առաքելական Եկեղեցու ներկայիս գործունեության և մասնավորապես Եկեղեցու կողմից իրականացվող զարգացման ծրագրերի մասին:

Ինչպես հավաստեցին հյուրերը, այդ ծրագրերին իրենց աջակցությունը կբերեն նաև իտալացի ձեռնարկատերերը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ